Funded by the European Union

«EU4Innovation East» – Աջակցություն թվային նորարարությանը Արևելյան գործընկերության տարածաշրջանում

Իրականացման ժամանակահատված: 01.04.2024 - 30.09.2028

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 20 000 000

Ընդհանուր բյուջե: € 22 120 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Expertise France

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/eu4innovationeast, instagram.com/eu4innovationeast, linkedin.com/company/eu4innovation-east

Նախագծի կայքէջ: eu4innovationeast.eu

Նախագծի նկարագրություն:

EU4Innovation նախագիծը նպատակ ունի ամրապնդել Արևելյան գործընկերության տարածաշրջանի տնտեսական դիմակայունությունը և խթանել նորարարությունը՝ դարձնելով ստարտափների էկոհամակարգը ավելի մրցունակ: Այն խթանում է տնտեսական աճը, զարգացնում համագործակցությունը և նպաստում տարածաշրջանային զարգացմանը՝ անդրադառնալով կարևոր խնդիրների, ինչպիսիք են ֆինանսավորման սահմանափակ հասանելիությունը, մասնագիտական հմտությունների պակասը և գենդերային անհավասարությունները:
Ծրագրի հիմնական ուղղություններն են բարձր արդյունավետությամբ ինկուբատորների զարգացումը, ստարտափների համար ֆինանսավորման և շուկաների հասանելիության ընդլայնումը, ինչպես նաև նպատակային աջակցությունը Ուկրաինայի տեխնոլոգիական ոլորտին: Համաֆինանսավորման, հմտությունների զարգացման, կարգավորող միջավայրի բարելավման և գենդերային ներառման միջոցով նախագիծը նպաստում է տարածաշրջանում կայուն և ներառական տնտեսական զարգացմանը:

Ակնկալվող արդյունքներ:

SO1. Արևելյան գործընկերության երկրներում ստարտափները ավելի մեծ հնարավորություն են ստանում օգտվելու նախնական փուլում (pre-seed) տեղական ֆինանսավորումից, օրինակ դրամահավաքից, վաուչերներից և այլ աջակցման գործիքներից, այդ թվում նաև կանանց կողմից հիմնադրված կամ համահիմնադրված ստարտափների համար:
SO2. Արևելյան գործընկերության երկրների ստարտափների էկոհամակարգերը ավելի կազմակերպված և ամրապնդված են, ինչը նպաստում է նորարարության զարգացման համար ավելի բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորմանը:
SO3. Արևելյան գործընկերության երկրների էկոհամակարգերը ավելի ակտիվորեն կապվում են եվրոպական ներդրողների հետ, ինչի շնորհիվ ստարտափների համար ստեղծվում են ավելի մեծ հնարավորություններ միջազգային ներդրումներ ներգրավելու համար:
SO Ukraine. Ուկրաինայի ստարտափների էկոհամակարգը զարգացնում և ամրապնդում է իր կարողությունները՝ տեղական ստարտափներին ավելի արդյունավետ աջակցություն տրամադրելու համար: